

երեւակայութենէն վեր է: Չայն լաւագոյնս
ըմբռնելու համար՝ նկատելու ենք Հայոց
այգեգործութեան ընդարձակութիւնը:
Ստրարոն իւր օրերէն կը տեսնէր զՀայաս-
տան եւ ուրիշ անդրեփրատեան գաւառնե-
րը՝ «գրեթէ ամենուրեք ծածկուած որ-
թերով, եւ սքանչելի որթերը, կ'ըսէ, կու-
տան պատուականագոյն գինիները» (Ստր.
Պ, 248): Նոյնպէս Քսենոփոն կը գտնէր իւր
ասպնջական Հայոց քով «անուշահոտ ըս-
քանչելի հին գինիներ» (Բ, 90):

Այրարատ իւր բազմապիսի բարեաց մէջ
ունէր նաեւ «զանպակասութիւն գինւոյ»
(Փրպ. 23): Հռչակաւոր էր մեր գաւառաց
մէջ Գողթն, որ իւր անսովոր առատու-
թեամբ ժառանգած էր «գինաւէտ» մակ-
դիրը (Խոր. 58, 609): Կը հաւատամ թէ
մեր պատմահայրը հին Երուանդակերտի
շուրջ դեռ իւր օրով ալ կը տեսնէր «զբազ-
մութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանաց
խիտ եւ գեղեցիկ ծիր, որոյ հիւսիսային
կողմանն դիր կարակնաձեւ՝ արդարեւ գե-
ղաւոր կուսից յօնից դարեւանդաց համե-
մատ» (119), աղու բանաստեղծութիւն՝
զոր կարծես այդ այգիներու բերքն իսկ
ներշնչած է իւր ծերացած մտքի թելերուն:
Կը յիշուի նաեւ վաղարշապատի մօտ գը-
տուած «այգեստանին», որ ապաւէն եւ